



Ֆիզիկական ԿՈԼՈՔՎԻՈՒՄ - Դ -

Հինգշաբթի | 10 փետրվարի 2022 | 15:00
Երևանի պետական համալսարան, ֆիզիկայի ֆակուլտետ

Վալերի Վարդանյան

Տիեզերքի ֆիզիկայի և մաթեմատիկայի Բավլի ինստիտուտ
Kavli Institute for the Physics and Mathematics of the Universe

Ելույթի թեման`

Կոսմոլոգիական մոդելները գրավիտացիոն ալիքների լույսի ներքո

Չեկոյցը նվիրված է կոսմոլոգիական ու աստղաֆիզիկական գրավիտացիոն ալիքներին: Մասնավորապես, կքննարկենք գրավիտացիոն ալիքների կիրառությամբ մուգ էներգիայի և ինֆլիացիոն տեսությունների միկրոսկոպական հատկությունների ուսումնասիրման որոշ արդի արդյունքներ: Չեկուցման առաջին մասը նվիրված կլինի գրավիտացիոն ալիքների աստղաֆիզիկական աղբյուրների տարածական բաշխման մոդելավորմանը և դրանից ստացվող ինֆորմացիայի ուսումնասիրմանը մուգ էներգիայի, գրավիտացիայի ալտերնատիվ տեսությունների, ինչպես նաև սև խոռոչների հատկությունների համատեքստում: Երկրորդ մասում կքննարկենք վաղ տիեզերքում վակուումի քվանտային ֆլուկտուացիաներից գեներացված գրավիտացիոն ալիքներն ու դրանց ուժեղացման մի կարևոր մեխանիզմ: